

որ առանձին սէր ունին դէպի անշարժ կալուածները, որոնց եկամուտը թէև սակաւ է, բայց ապահով: Եւ ձեռնհաս չեմ ապացուցանելու, բայց կարծում եմ, որ եթէ մէկը մեր հարուստներից կամ մի քանիսը միասին ձեռնարկեն մի թատրոն շինելու, նրանց կապիտալը ոչ կը կորչի ոչ էլ առանց որոշ եկամտի կը մնա: Ապացուց ձեզ հէնց նորն իսկ Արտիստիքական Ընկերութեան թատրոնը, որը տալիս է եթէ չեմ սխալվում  $4\frac{1}{2}$  ից աւելի, չը նախելով, որ նրա վրայ շատ աւելորդ ծախսեր են եղած շտապ կառուցվելու շնորհով: Պարտաւորական չէ որ հալ թատրոնը կառուցուի իբրև լոկ թատրոն, նա կարող է շրջապատուած լինել խանութներով ու բնակարաններով, որոնք կը տրուին վարձով: Վերջապէս, գոնէ այս դէպքում հալ կապիտալիստի կալուածը մի կամ երկու տոկոս պակաս տալ, միթէ այս չնչին ղոհաբերութեան անգամ նա անընդունակ է:

Իսկ եթէ այս էլ անիրագործելի է, այն ժամանակ թող Դրամատիկական Ընկերութիւնը աշխատի գոնէ աւելի ձեռնասու և ոչ վիրաւորական պայմաններով վերցնել առ միշտ Արտիստիքական Ընկերութեան թատրոնը, այնպէս որ գոնէ ինքը լինի խմբի ներկայացումների օրերն որոշողը: Այսպէս թէ այնպէս այն հանգամանքներով ինչպէս այժմ, երբէք հալ թատրոնը չի կարող հաստատ հիմք ունենալ և առաջադիմել: Իսկ կարծել, թէ էթանագին շէնք կառուցանելով, զեղարուեստի բարդ տարրերից մէկը մեղանում կը ծաղկեցնենք, թիւրիմացութիւն է...

ԳԻՏՈՂ

## ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆԾԵՆՑԻՆԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ: Սեպտեմբերի սկզբին Վիսթադէնում կալացաւ կոնգրէս, որ նուիրուած էր լատկապէս բէօնագէնեան ճառագայթների նոր լաջողութեան: Երբ Վիւրցբուրգի պրոֆէսսոր Բէօնագէնը լատնագործեց անտեսանելի ճառագայթները, առաջինը սկսան գործ դնել վիրաբույժները. անլատ ճառագայթները թափանցելով հիւսուածքների խորքը՝ լաջողեցան որոշել գնդակը, ասեղը և այլ օտար մարմիններ: Բայց բժշկականութեան քրմերը չբաւականացան դորանով. նոքա սկսան անտեսանելի ճառագայթների համար աւելի լայն և աւելի օգտակար գործածութեան ասպարէզ որոնել: Նոքա երագում էին ղոցանով լուսաւորել մարդու ներքինը և այդպիսով որոշել միջի թերութիւնները: Սակայն հեշտ չէր այս խնդիրը վճռել: Սակայն գիտնականները դժուարութեանց առաջ չեն կանգ առնում: Այժմ արդէն մի որոշ աստիճան լաջողել է լու-

սաւորել ներքին գործարանները. լաշոդում է ճանաչել կրծքի խոռոչում եղած ուռուցը, երիկամների մէջ գտնուած քարը, վիրաբույժները կօնգրէսը գլխաւորապէս դրապուած էր բեծնազէնեան ճառագայթներով ներքին հիւանդութիւնները որոշելու խնդրով: Այս առթիւ մի հետաքրքրական զեկուցում կարպացալնտեղ պրոֆ. Բենեդիկտը, հաղորդելով իւր փորձերը, բեծնազէնեան ճառագայթներով ուղեղը լուսաւորելու վերաբերմամբ: Յօրգելի գիտնականը ընդ նմին ներկայացրեց և լւր կատարած փորձերի բազմաթիւ նկարները: Ուղեղում եղած ուռուցը կամ բորբոքման քրտինքը նկարի վերայ դուրս էր եկել ինչպէս մի մութ բիծ, և այսպիսով հնարաւոր է դառնում հաստատ կերպով որոշել ուղեղի մէջ կատարուող հիւանդային գործունէութիւնը: Գիտնականները կարծում են, որ երբ մի անգամ լաշոդեց ուղեղի տարածութիւնը լուսաւորել, բեծնազէնեան ճառագայթների ներքին բժշկութեան նպատակներին կատարելապէս ծառայեցնելը միայն ժամանակի խնդիր է մնում: Ինչքան սխալներից կարելի էր այսպիսով խոյս տալ քանի անգամներ կարելի էր կեանք փրկել, երբ հնար լինի ժամանակին ճանաչել մարդու ներքին թերութիւնները:

2. ԹՈՒՔԱԽՏԻ ՄԻԿՐՈՅ. Թոքախտի նոր միկրոբ է գտնուած դոքտ. Ֆէրրամի ձեռքով: Նա ապացուցանում է, որ թոքախտաւորների խորխի մէջ կոխի ձողիկների հետ միասին գտնուում է և մի ուրիշ, թոքախտ առաջացնող, ձողիկ, որ երբեմն առաջնի երեկուց առաջ է արտաթորում: Այս միկրոբը մի քանի ձև է ունենում, որ կարելի է արհեստապէս աճեցնել: Եթէ սրսկենք ծովալին խոճկորներին  $\frac{1}{3}$ — $\frac{1}{2}$  խոր. սանալ, քանակութեամբ, այս կենդանիներին արհեստքամ են անում և 1—2 օրից լետու պատճառում են մահ: Եթէ այս ծորող հեղուկից 4—5 կաթիլ սրսկենք մի կենդանուց միւսին, դորա վտանգաւորութիւնը աստիճանաբար նուազում է և վերջապէս բոլորովին անհետանում: Սա ցոյց է տալիս, որ առաջին խոճկորների արագ մահուան պատճառը այն թոյնն է, որ գոյանում է պատրաստ լուծուածքի մէջ: Այն խոճկորները, որոնք միանգամից չեն սատակում սկզբնական թոյնի ազդեցութիւնից, ենթարկուած են վատարիւնութեան, որ այսպէս մահ է առթում: Եթէ կենդանի են մնում առնուազն երեք ամիս, նոցա բորբոքուող հիւսուածքներում առաջ են գալիս աւելի կամ պակաս ցրուած գնդիկներ, այսինքն իսկական գնդկալատ, կոխի ձողիկներով, Ուստի և Ֆէրամը իւր գտած միկրոբը անուանեց թոքախտածին ձողիկ: Նորա կարծիքով հէնց դա է գլխաւոր պատճառ գեղկալտի տարածման: Ֆէրրամի հետազոտութիւնները անկասկած ահազին նշանակութիւն ունին թոքախտի դէմ նախապայտպանող պատուաստների խնդիրը վճռելու համար, որոնց անլաշոդութեանց գլխաւոր պատճառը հէնց գնդկալատի ձողիկի և նորա երիւթներին մեր անբաւարար չափով ծանօթութիւն է:

Վերջին տեղեկութիւնները համեմատ տանջող և խեղաթիւրող գալլուկը (Urus) որին ոչ դանակ էր մերձենում և ոչ կրակ, լաղթանարուել է անտեսանելի լուսի ներգործութիւնից: Գալլուկի վերքերը բաւական արագ ողջանում են Բեօնտզէնի լուսի աղդեցութիւնից: Ասում են նույնպէս, որ ներկայումս Բեօնտզէնի ճառագայթներով լաջող կերպով բշկում են և քաղցկեղը (РАКЪ),

ՄԱՐԿՕՆԻԻ ՆՈՐ ՀՆՈՒԱԳՐԱԿԱՅԱՆԸ: Մարկօնին աւարտեց անդրատլանդեան անթիւ հեռագրի կայարանը Նոր Շոտլանդիայում: Սա անկասկած աշխարհիս ամենաօրինակելի կայարանն է: Ամենից հետաքրքիրն է ամբողջ օդանցքի չորս աշտարակները 215 ոտնաչափ բարձրութեամբ, հրապարակի չորս անկիւններում, որի ամեն մի կողմը 200 ոտն է: Իւրաքանչիւր աշտարակի բարձրութիւնից ձգուած է 150 օդային թելեր: Այս թելերը աշտարակների կենտրոնում միացած ևն մի հաստ պարանով, որը ուղղահայեաց կախուած է շինութեան մէջ հեռագրագործիքների համար: Այս թելերի միջոցով հաղորդում են Կօրնուէլսի կայարանին: Կործիքների շինութեան մէջ աշխատում են 200 մարդուց աւելի: Իս 10 ոտն. երկարութիւն ունի և լցուած է անթիւ գործիքներով: Անձանօթիւն թիւում է թէ սենեակը անթիւ թելերով լիքն է: Ալդտեղից մտնում է պահեստը, ուր գտնուում է 80,000 ձիւռ ոլթի հոսանք առաջացնելու չափ ելեքարականութիւն: Նորա ետեն է մեքենաների բաժանմունքը, և ապա երեք հսկայական կաթսա: Մի-միայն ելեքարական գործիքներին և մեքենաներին վճառուած է 200,000 ռուբլի.—կայարանը իւր գործունէութիւնը պէտք է սկսէր հոկտեմբեր ամսից: Հեռագիրները պէտք է ընդունուին Մարկօնիի հնարած նոր գործիքով, որ մի րոպէում ընդունում է մի քանի հարիւր թաւ: Եթէ Նոր Շոտլանդիայի կայարանը լաջող հետևանքներ ունենալ, երկրորդը կշինուի Ալեասկա, իսկ երրորդը Իարեյուսոյ Հրօւանդանի վերայ:

4. ՁԱՅՆԱՆԻՇՆԵՐԻ ՄԵՔԵՆԱԿԱՆ ԳՐԵԼԸ: Ամերիկացի Ռւլլիամ Տանլէն մի գործիք է հնարել, որով հնարաւոր է իսկոյն գրի անցկացնել նուազած երգը, մեքենական եղանակով: Այդ գործիքը գրելու մեքենայի նման է. ելեքարական թելերով այդ մեքենան միացնում է դաշնակի կամ դաշնամուրի ստեղնաշարի (КЛАВИАТУРА) հետ: Դրած թելերը կտրում են և գրած երգը կարելի է նորից մեքենայի միջոցով ելեքարակել, դաշնակի հետ միացրած մեքենայի միջոցով ելեքարական աղդեցութեամբ: Այսպիսով երաժիշտը միջոց է ունենում մի անգամ ևս լսել իւր հեղինակութիւնը և լոյս ընծայելուց առաջ փոփոխութիւններ մտցնել մէջը:—Տանլէի գործիքը ամեն դաշնամուրին լարմարում է: (Mos):